ԷՐԻԹԵՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

Կարմիր Ծովի հարավ-արևմտյան ափին գտնվող Էրիթերիան հիմնված է քրիստոնեական հնագույն Աքսում թագավորության տեղում: Իբրև հետևանք մահմեդական արշավանքների, 7-րդ դարում այն սկսում է անկում ապրել, և նրա տարածքում հիմնվում է Եթովպական նոր թագավորությունը: Մինչև 16-րդ դարը՝ Օսմանյան լծի տակ ընկնելը, տարածաշրջանը որոշակի անկախություն էր պահպանում: 1890-1941 թթ. Էրիթերիան Իտալիայի գաղութն էր, ապա այն նվաճվում է անգլիացիների կողմից: 1952 թ. Էրիթերիան դաշնության մեջ է մտնում Եթովպիայի հետ, իսկ 1962-ին դառնում է Եթովպիայի նահանգ: Ինքնավարության երկարատև պայքարն ավարտվում է 1993 թ. մայիսի 24-ին՝ երկրի անկախության հռչակումով:

Եթովպական Ուղղափառ Եկեղեցուց բաժանվելու և ավտոկեֆալության կարգավիճակ ձեռք բերելու նպատակով, 1993 թ. հուլիսին երկրի եպիսկոպոսը (կառավարության օժանդակությամբ) դիմում է Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա III Պապին: 1993 թ. սեպտեմբերի 28-ին ղպտի սուրբ սինոդը դրական պատասխան է տալիս և թույլատրում Էրիթերիական Եկեղեցու ապագա 10 եպիսկոպոսների ուսումնառությունը ղպտի վանքերում: 1994 թ. հունիսի 19-ին Կահիրեում Շենուդա Պապը նրանցից 5-ին ձեռնադրում է եպիսկոպոս:

Էրիթերիական Ուղղափառ Եկեղեցին անկախություն է ձեռք բերել Եթովպական Ուղղափառ Եկեղեցու համաձայնությամբ: 1993 թ. սեպտեմբերի սկզբներին Պաուլոս Պատրիարքն ու Փիլիպոս Արքեպիսկոպոսը (Էրիթերիայի առաջնորդը) վավերացնում են իրենց Եկեղեցիների բաժանումը՝ ընդգծելով, սակայն, սերտ համագործակցության իրենց ցանկությունը: 1994 թ. փետրվարին Ադիս Աբեբայում ստորագրվում է մի համաձայնագիր, որը վերահաստատում էր Եթովպական և Էրիթերիական Ուղղափառ Եկեղեցիների ավտոկեֆալությունը և ճանաչում էր Աֆրիկայում գտնվող Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մեջ՝ Ղպտի Եկեղեցու առաջնության պատիվը:

Էրիթերիական Ուղղափառ Եկեղեցին ունի 1. 500 եկեղեցի, 22 վանք և 15.000 հոգևորական:

Ronald G. Roberson - ի «THE EASTERN CHRISTIAN CURCHES» գրքից հայերեն փոխադրեց ԲԱԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆԸ